

Տեղեկատվություն

<<Դիլիջան>> ԱՊ ՊՈԱԿ-ի 2016թ-ի մարտ ամսվա կատարված աշխատանքների

Մարտ ամսին պահպանության բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում հայտնաբերվել է ապօրինի հատված 8 ծառ, որոնց համար կազմվել է 4 անտառխախտման արձանագրություն և ուղարկվել Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության աշխատակազմի բնապահպանական պետական տեսչության Տավուշի տարածքային բաժին: <<Դիլիջան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի աշխատակիցների հետ անց են կացվել խորհրդակցություններ, սեմինարներ՝ ապօրինի ծառահատումների, որսագողության, բույսերի հավաքի՝ մասնավորապես Կարմիր գրքում գրանցված ծառատեսակների և բույսերի վերաբերյալ:

Գիտական բաժնի աշխատակիցների կողմից <<Դիլիջան>> ազգային պարկի տարածքում իրականացվել են ֆենոլոգիական ուսումնասիրություններ: Մշակվել է դասընթացների համար նախատեսված <<<<Դիլիջան>> ազգային պարկի կաթնասունները>> վերնագրով թեման: Կազմակերպվել է դասընթաց Դիլիջանի թիվ 6 հիմնական դպրոցի 8-րդ և 9-րդ դասարանների աշակերտների համար <<<<Դիլիջան>> ազգային պարկ>> թեմայով:

Էկոտուրիզմի և ռեկրեացիայի բաժնի կողմից Էկոտուրիզմի գովազդման նպատակով այցելություններ են կատարվել Դիլիջան քաղաքում գործող մի շարք հյուրատներ: Նշված հյուրատներում ներկայացվել են <<Դիլիջան>> ազգային պարկի էկոտուրիստական հնարավորությունները, տրամադրվել են տեղեկատվական նյութեր՝ գրքույկներ, բուկլետներ: Հաղարծին վանական համալիր տանող ճանապարհին հարակից տարածքներում իրականացվել են աղբահանության աշխատանքներ: